

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

Ստուգաթերթ N 1.18

**Տուբերկուլոզ հիվանդության համաճարակաբանական դիտարկման և կանխարգելման վերահսկողություն
Ձ 86 (ՏԳՏԴ)**

1. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը,

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ 20__թ. _____ ավարտը՝ 20__թ. _____

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

Պետական ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

--	--	--	--	--	--	--	--

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները

(հեռախոսահամարը)

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը

(հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ 20__թ.

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ _____

2.ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

N	Հարց	Պատասխան
1.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
2.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող մասնաճյուղերը և գտնվելու վայրը	
3.	Տնտեսավարող սուբյեկտի լիցենզիայի տեսակները	
4.	Տնտեսավարող սուբյեկտի աշխատակիցների թիվը	
5.	Տարեկան սպասարկվող պացիենտների միջին թիվը	

3. ՀԱՐՑԱՇԱՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ**

Հ/Հ	Հարց	Հղում նորմատիվ իրավական ակտին	Պատասխան			Կշիռ	Ստուգման մեթոդը	Մեկնաբանություն
			Այո	Ոչ	Զ/Պ			
1.	Տուբերկուլոզ հիվանդության կասկածի դեպքում բժշկական կազմակերպությունների միջամտությունների սենքում իրականացվում է տուբերկուլինային մաշկային թեստ (այսուհետ՝ ՏՄԹ) կամ ՏԲ կաբինետին կից կամ կցագրված լաբորատորիայում իրականացվում է գամմա-ինտերֆերոնի արտազատման փորձ (այսուհետ՝ ԳԻԱՓ) կամ համարժեք այլ հետազոտություն	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 5				2.0	Փաստաթղթային	
2.	Բժշկական կազմակերպությունը տուբերկուլոզ հիվանդության դեպքերի հաշվառումը, հաղորդումը և հաշվետվությունն իրականացնում է՝ համաձայն հիվանդությունների և թունավորումների դեպքերի հաշվառմանը, և հաղորդմանը ներկայացվող պահանջների Նշում 1	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 6 ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N 35-Ն հրաման, հավելված, կետ 11				3.0	Փաստաթղթային	

3.	Բժշկական օգնության դիմելիս դիսկի խմբում ընդգրկված անձանց մոտ տուբերկուլոզին բնորոշ ախտանշաններ հայտնաբերելիս՝ 3 օրվա ընթացքում ուղեգրվում են տուբերկուլոզային բժշկական կազմակերպություն Նշում 2	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 13				2.0	Փաստաթղթային	
4.	Զննության արդյունքների մասին կատարվում է գրառում պացիենտի բժշկական փաստաթղթերում	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 13				2.0	Փաստաթղթային	
5.	Առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպությունների ՏԲ կաբինետ ուղեգրված թոքային տուբերկուլոզ հիվանդության կասկածով պացիենտները երկու օրվա ընթացքում ենթարկվում են խորխի մեկ գենէքսպերտ և երկու մանրադիտակային հետազոտության՝ տվյալ կազմակերպության կողմից կամ վերջինիս կցագրված տուբերկուլոզի ախտորոշման գենէքսպերտ և մանրադիտակային հետազոտություն իրականացնող լաբորատորիայում	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 16				3.0	Փաստաթղթային	

6.	Տուբերկուլոզ հիվանդության կասկածով պացիենտների ախտաբանական նմուշների մանրէաբանական հետազոտության և ֆենոտիպային դեղագգայության որոշման նպատակով կենսանմուշները տեղափոխվում են ԹԱԿ-ի Ազգային ռեֆերենս լաբորատորիա	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 17				2.0	Փաստաթղթային	
7.	Տուբերկուլոզ հիվանդության կասկածով պացիենտների նմուշների հետազոտման բոլոր արդյունքները գրանցվում են նաև տուբերկուլոզի տվյալների առցանց համակարգում:	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 18				2.0	Փաստաթղթային	
8.	Տուբերկուլոզ հիվանդության կասկածով պացիենտների ախտորոշման նպատակով իրականացված ռենտգենաբանական և այլ գործիքային հետազոտությունների արդյունքները գրանցվում են ՏԲ կաբինետում վարվող տուբերկուլոզ հիվանդության կասկածով պացիենտների գրանցամատյանում:	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 19				2.0	Փաստաթղթային	
9.	Բժշկական կազմակերպություններում պացիենտների ռենտգենաբանական և այլ գործիքային հետազոտությունների արդյունքում հայտնաբերված տուբերկուլոզ հիվանդությանը բնորոշ փոփոխությունների դեպքում պացիենտները 3 օրվա ընթացքում ուղեգրվում են տվյալ բժշկական կազմակերպության կամ պացիենտի կցագրված բժշկական կազմակերպության ՏԲ կաբինետ, ցուցման դեպքում պացիենտներն ուղեգրվում են ԹԱԿ՝	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 20				2.0	Փաստաթղթային	

	հետագա հետազոտությունները կազմակերպելու նպատակով							
10.	Տուբերկուլոզ հիվանդության օջախում ՏԲ կաբինետի մասնագետի կողմից իրականացվում է՝							
1)	ԱԱԴ-ի մասնագետի հետ տուբերկուլոզ հիվանդության հայտնաբերման նպատակով կոնտակտավորների շփումների ուսումնասիրություն՝ ինդեքս դեպքի հետ նախկինում շփված և չախտորոշված անձանց հայտնաբերում, այդ թվում՝ սերտ շփում ունեցող կոնտակտավորների տարանջատում, ովքեր տուբերկուլոզ հիվանդությամբ պացիենտի հետ չեն բնակվում նույն հասցեում, սակայն ունեցել են երկարատև շփում սահմանափակ տարածքում՝ ընթացիկ հիվանդության սկսվելուց առաջ 3 ամսվա ընթացքում	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 23, ենթակետ 1				3.0	Փաստաթղթային	
2)	տուբերկուլոզ հիվանդությամբ պացիենտի կոնտակտավորների հետազոտությունների կազմակերպում	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 23, ենթակետ 2				3.0	Փաստաթղթային	

3)	0-15 տարեկան կոնտակտավոր երեխաների կանխարգելիչ բուժում	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 23, ենթակետ 3				3.0	Փաստաթղթային	
4)	մինչև 18 տարեկան կոնտակտավոր երեխաների շրջանում՝ տուբերկուլոզի ախտորոշման թեստ՝ ՏՄԹ կամ ԳԻԱԹ	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 23, ենթակետ 4				3.0	Փաստաթղթային	
5)	18 տարեկանից բարձր կոնտակտավորների շրջանում, խորխի առկայության դեպքում՝ խորխի մեկ նմուշ գենէքսպերտ և երկու նմուշ մանրադիտակային հետազոտություն, խորխի բացակայության դեպքում՝ թոքերի ռենտգենաբանական հետազոտություն	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 23, ենթակետ 5				3.0	Փաստաթղթային	
6)	ընտանեկան կոնտակտավորների տվյալների գրանցում տուբերկուլոզի առցանց համակարգում:	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 23, ենթակետ 6				2.0	Փաստաթղթային	
11.	Տուբերկուլոզ հիվանդությամբ պացիենտների կոնտակտավորների նկատմամբ սահմանվում է հսկողություն դեպքի արձանագրումից հետո երկու տարվա ընթացքում	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 24				3.0	Փաստաթղթային	

12.	Մինչև 18 տարեկան կոնտակտավոր երեխաների շրջանում՝ տուբերկուլոզի ախտորոշման թեստն առաջին տարում իրականացվում է եռամսյակը մեկ անգամ, իսկ երկրորդ տարում՝ կիսամյակը մեկ անգամ	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 24				3.0	Փաստաթղթային	
13.	18 տարեկանից բարձր կոնտակտավորների շրջանում, խորխի առկայության դեպքում՝ խորխի մեկ նմուշ գենէքսպերտ և երկու նմուշ մանրադիտակային հետազոտություն, խորխի բացակայության դեպքում՝ թոքերի ռենտգենաբանական հետազոտությունն առաջին տարում իրականացվում է եռամսյակը մեկ անգամ, իսկ երկրորդ տարում՝ կիսամյակը մեկ անգամ	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 24				3.0	Փաստաթղթային	
14.	Աշխատավայրում տուբերկուլոզ հիվանդության արձանագրման դեպքում իրականացվում է կոնտակտավորների լաբորատոր հետազոտություն, որը կազմակերպվում է աշխատավայրի տեղակայման տարածքային ՏԲ կաբինետի կողմից, հետազոտությունների արդյունքները տրամադրվում են կոնտակտավորների բնակության վայրի ԱԱՊ-ին	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 25				3.0	Փաստաթղթային	

15.	Բժշկական զննության ենթակա անձնակազմը ենթարկվել է առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննությունների Նշում 3	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 26 ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում, հավելված N 2				3.0	Փաստաթղթային	
16.	Անձնական սանիտարական (բժշկական) գրքույկը համապատասխանում է սահմանված ձևին Նշում 4	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում, հավելված N 3				3.0	Փաստաթղթային	
17.	Կազմակերպության տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը լրացրել է բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը Նշում 5	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում, հավելված N 4				3.0	Փաստաթղթային	
18.	Տուբերկուլոզ հիվանդության կանխարգելման և վաղ հայտնաբերման նպատակով, նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց նկատմամբ իրականացվում են տուբերկուլոզի հայտնաբերման հետազոտություններ	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 27				3.0	Փաստաթղթային	

19.	Տուբերկուլոզային բժշկական կազմակերպություններում բուժանձնակազմի շրջանում վարակի կանխարգելման նպատակով աշխատանքի նոր ընդունված անձանց կատարվում է նախնական հրահանգավորում տուբերկուլոզային բժշկական կազմակերպություններում աշխատանքի առանձնահատկությունների, անհատական պաշտպանության և անձնական հիգիենայի, հիգիենիկ հակահամաճարակային ռեժիմի պահպանման կանոնների, աշխատանքի անվտանգության հարցերի և նրանց պարտականությունների վերաբերյալ	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 29				1.0	հարցում	
20.	Աշխատանքի նոր ընդունվող կրտսեր բուժաշխատողների հետ անց է կացվում ուսուցում՝ հիվանդասենյակներում և բաժիններում աշխատելու համար նվազագույն գիտելիքներ ուսուցանելու նպատակով, հետագայում 6 ամիսը մեկ անգամ, անց է կացվում կրկնահրահանգավորում՝ տեխնիկական անվտանգության կանոնների վերաբերյալ	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 29				1.0	հարցում	
21.	Հիվանդանոցային տուբերկուլոզային բժշկական կազմակերպությունների ընդունարաններն ապահովված են պացիենտների զննման համար անհրաժեշտ բժշկական նշանակության արտադրատեսակներով, սարքերով և պարագաներով, պացիենտների սանիտարական մշակման համար անձնական հիգիենայի պարագաներով,	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 31				2.0	դիտողական	

	լվացման և ախտահանման նյութերով							
22.	Պացիենտների հետ շփվող աշխատակիցները կրում են անհատական պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ արտահագուստ, շնչադիմակ	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 32				2.0	դիտողական	
23.	Հիվանդանոցային տուբերկուլոզային բժշկական կազմակերպություններում յուրաքանչյուր պացիենտի ընդունումից հետո ընդունարանում (բոքսում) իրականացվում է խոնավ մշակում ախտահանիչ լուծույթներով	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 33				2.0	դիտողական	
24.	Տուբերկուլոզային բժշկական կազմակերպություններում վարակի տարածման կանխարգելման նպատակով իրականացվում են ախտահանման աշխատանքներ՝ համաձայն ախտահանման, կրծողասպան և հողվածոտանիների ոչնչացման աշխատանքների իրականացմանը և աշխատողների առողջության պահպանմանը ներկայացվող պահանջների	ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման, հավելված, կետ 34, ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հուլիսի 16-ի N 13-Ն հրաման, հավելված, կետ 76, կետ 124				2.0	փաստաթղթային	

Նշում 1

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կազմակերպության անվանում

Բժշկական փաստաթուղթ
ՄԱՏՅԱՆ

Հիվանդությունների հաշվառման

Սկիզբ «__» 20 թ.

Վերջ «__» 20 թ.

Վարակիչ հիվանդության անվանում _____

N	Արտա- հերթ կամ ընթա- ցիկ հաղոր- ման ամսա- թիվ	Պացիեն- տի անուն, ազգա- նուն, հայրա- նուն	Ծննդյան ամիս, ամսա- թիվ և տարի	Հասցե՝ մարզ, քաղաք, գյուղ, փողոց, տուն, բն.	Աշխա- տանքի կամ ուսման կազմա- կերպու- թյան անվանում, վերջին հաճախ- ման ամսաթիվ	Հիվանդա- նալու ամսաթիվ	Նախ- նական կամ առաջ- նակի ախտորո- շում և ամսաթիվ	Հոսպիտա- լացման ամսաթիվ	Հոս- պիտա- լացման ստորա- բաժանում (բաժին, բաժան- մունք)	Առաջին անգամ ԲԿ դիմելու ամսաթիվ/ Ձև 1 և Ձև 2-ով հաստատ- ված հիվանդու- թյունների կա- պակցու- թյամբ	Փոփոխ- ված (ճշտված) ախտո- րոշում և ամսա- թիվ	Լաբորա- տոր հետա- զոտու- թյուններ, արդյունք	Դուրս- գրման ամսա- թիվ/եթ	Հաղոր- դողի և ստացողի անուն, ազգա- նուն	Ծա- նո- թու- թյուն- ներ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

Նշում 2

Տուբերկուլոզ հիվանդության դիսկի խմբերն են

1) Համայնքներում բնակվող բնակչության շրջանում՝

ա. սոցիալապես անապահով և անօթևան անձինք,

բ. հեռավոր, այդ թվում՝ սահմանամերձ բնակավայրերում, բնակվող անձինք,

գ. փախստականներ, բնական աղետների կամ այլ պատճառներով տեղահանված անձինք,

դ. բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների բնակիչները,

ե. որոշակի տարածաշրջանում բնակվող կամ որոշակի զբաղմունք ունեցող անձինք, որոնց շրջանում տուբերկուլոզ հիվանդության տարածվածությունը կամ հիվանդացությունը զգալիորեն ավելի բարձր է, քան ընդհանուր բնակչության մոտ,

զ. անձինք, ովքեր վերադարձել են տուբերկուլոզ հիվանդության բարձր տարածվածությամբ երկրից,

է. կալանավորված անձինք և դատապարտյալները:

2) Առողջապահական մակարդակում՝

ա. նախկինում տուբերկուլոզ հիվանդությունից բուժված անձինք, ովքեր գտնվում են հետբուժական շարունակական հսկողության մեջ սահմանված ժամկետներում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2022 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանի,

բ. թոքերի տարածուն ֆիբրոզ փոփոխություններով և քրոնիկ թոքային հիվանդություններով անձինք,

գ. մարդու իմունային անբավարարության վիրուսով (այսուհետ՝ ՄԻԱՎ) վարակված անձինք,

դ. հոգեներգործուն նյութերի, թմրամիջոցների, ալկոհոլի գործածումից ֆիզիոլոգիական կամ հոգեբանական կախվածություններով անձինք,

ե. տուբերկուլոզ հիվանդության աղբյուրի հետ երկարատև կամ մասնագիտական շփում ունեցող անձինք՝ տուբերկուլոզային բժշկական կազմակերպությունների բուժաշխատողներ, տուբերկուլոզ հիվանդությամբ անձանց ընտանեկան և այլ երկարատև շփում ունեցող կոնտակտավորներ՝ պացիենտի մոտ մանրէազատման դադարումից, մահվան կամ բնակության այլ վայր տեղափոխվելուց հետո՝ մեկ տարի ժամկետով,

զ. ստամոքս-աղիքային համակարգի ոչ մասնահատուկ (սպեցիֆիկ) քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք, այդ թվում՝ խոցային հիվանդություն և վիճակ՝ ստամոքսի վիրահատությունից հետո,

է. շաքարային դիաբետով անձինք,

ը. իմունային համակարգը թուլացնող բուժում (կորտիկոստերոիդային, ճառագայթային և ցիտոստատիկ բուժում) ստացող անձինք,

թ. առաջնային իմունային անբավարարությամբ հիվանդ անձինք,

ժ. փոշեգարությամբ անձինք՝ սիլիկոզ, անտրակոզ, բերիլիոզ և այլն,

ի. թերսնված կամ անբավարար մարմնի զանգված ունեցող (մարմնի զանգվածի ինդեքսը՝ 18-ից ցածր) անձինք:

Նշում 3

ՑԱՆԿ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ ՈՒ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ

N N ը/ կ	Կազմակերպու- թյուններ և մասնագիտությ- յուններ	Թերա- պևտի ընտանե- կան բժշկի զննում	Հետազոտու- թյուններ տուբերկուլոզի նկատմամբ	Մաշկա- վեներա- բանի զննում	Հետազո- տություն սիֆիլիսի նկատմամբ	Հետազո- տու թյուն աղիքային վարակիչ հիվանդու- թյունների նկատմամբ (մանրէա- կրություն)	Հետա- զոտու- թյուն- ներ հե- մինթա- կրու- թյան նկատ- մամբ	Հետազոտու- թյուն վիրու- սային հե- պատիտ Բ-ի նկատմամբ	Հետա- զոտություն վիրուսային հեպատիտ Ց-ի նկատմամբ	Հետազո- տություն քիթ-ըմպանի ախտածին ստա- ֆիլակոկի նկատմամբ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

3.	Մանկաբարձագինեկոլոգիական, 18 տարեկանից ցածր անձանց բժշկական օգնություն և սպասարկում, ստոմատոլոգիական, վիրաբուժական, մաշկավեներաբանական, բժշկական օգնություն և սպասարկում (արտահիվանդանոցային և հիվանդանոցային) իրականացնող, հոգեբուժական կազմակերպություններ, շտապ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների, ինֆեկցիոն, այդ թվում՝ հակատուբերկուլոզային հիվանդանոցների (բաժանմունքների, կաբինետների), վերակենդա-	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ՝ միջամտություններ իրականացնող կամ արյան և դրա բաղադրիչների հետ առնչվող բուժաշխատողները միայն	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ՝ միջամտություններ իրականացնող կամ արյան և դրա բաղադրիչների հետ առնչվող բուժաշխատողները	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ՝ միայն միջամտություններ իրականացնող կամ արյան և դրա բաղադրիչների հետ առնչվող բուժաշխատողները	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ
----	---	---	---	---	--	---	---	--	--	---

նացման, հեմոդիալիզի բաժանմունքների, ախտորոշիչ լա- բորատորիաների, մանրէազերծման բաժանմունքների, արյան հավաքագրման և փոխներարկման կետերի կամ բաժանմունքների, միջամտություններ իրականացնող կաբինետների բուժաշխատողներ									
---	--	--	--	--	--	--	--	--	--

Նշում 4

Ձեռ

ԱՆՁՆԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ (ԲԺՇԿԱԿԱՆ) ԳՐՔՈՒՅԿ

ԼՈՒՍԱՆԿԱՐ

(գրքույկի տիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

(կազմակերպության տնօրենի ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

_____ 20 թ.

1. Տվյալներ սանիտարական (բժշկական) գրքույկի տիրոջ մասին՝

ազգանունը -----
 անունը, հայրանունը -----
 ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը -----
 բնակության վայրը -----
 մասնագիտությունը -----
 պաշտոնը -----
 կազմակերպությունը -----
 Նշում՝ այլ կազմակերպություններ աշխատանքի տեղափոխվելու մասին -----

2. Թերապևտի զննման արդյունքը

Ամսաթիվ	Բժշկի եզրակացությունը	Նշում՝ տարած սուր աղիքային հիվանդությունների մասին	Բժշկի ստորագրությունը

3. Տուբերկուլոզի վերաբերյալ հետազոտության արդյունք

Ամսաթիվ	Բժշկի եզրակացությունը	Բժշկի ստորագրությունը

4. Մաշկավեներաբանի զննման արդյունքը

Ամսաթիվ	Բժշկի եզրակացությունը	Բժշկի ստորագրությունը

5. Սիֆիլիսի նկատմամբ հետազոտության արդյունքը

Ամսաթիվ	Հետազոտության անվանում, արդյունքը	Բժշկի եզրակացությունը	Բժշկի ստորագրությունը

6. Հեպատիտ Բ-ի նկատմամբ հետազոտության արդյունքը

Ամսաթիվ	Հետազոտության անվանում, արդյունքը	Բժշկի եզրակացությունը	Բժշկի ստորագրությունը

7. Հեպատիտ Ց-ի նկատմամբ հետազոտության արդյունքը

Ամսաթիվ	Հետազոտության անվանում, արդյունքը	Բժշկի եզրակացությունը	Բժշկի ստորագրությունը

8. Աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչների հայտնաբերման նպատակով կատարված հետազոտությունների արդյունքները

Ամսաթիվ	Հետազոտության արդյունքը	Բժշկի ստորագրությունը

9. Հելմինթոզների հայտնաբերման նպատակով կատարված հետազոտությունների արդյունքները

Ամսաթիվ	Հետազոտության արդյունքը	Բժշկի ստորագրությունը

10. Քիթ-ըմպանի քսուքի՝ ստաֆիլակոկակրության վերաբերյալ հետազոտությունների արդյունքները

Ամսաթիվ	Հետազոտության արդյունքը	Բժշկի ստորագրությունը

11. Նշումներ աշխատանքի թույլատրելու մասին:

Նշում 5

ՁԵՎ

ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻ

NN ը/կ	Անուն, ազ- գա- նուն, հայ- րա- նուն	Սեռ	Տա- րիք	Աշ- խա- տան- քի վայր	Պաշ- տոն	Բնա- կու- թյան վայր	Աշ- խա- տան- քի ըն- դու- ման ամ- սա- թիվ	Նախ- կին զննու- թյան ամ- սա- թիվ	Թերա- պևտի եզրա- կացու- թյունը	Սիֆի- լիսի նկատ- մամբ հետազո- տության արդ- յունք- ները	Տուբեր- կուլոզի նկատ- մամբ հետազո- տու- թյուն- ների արդյունք- ները	Մաշ- կա- վենե- րա- բանի եզրա- կացու- թյունը	Աղի- քային վա- րակիչ հի- վանդու- թյուն- ների նկատ- մամբ	Հել- մինթա- կրուզ- յան նկատ- մամբ հե- տազո- տութ- յան արդ-	Ստա- ֆիլա- կոկերի նկատ- մամբ հետա- զո- տութ- յան արդ-	Հեպա- տիտի Բ-ի նկատ- մամբ հե- տազո- տութ- յան արդ-	Հեպա- տիտի Ց-ի նկատ- մամբ հետա- զո- տութ- յան արդ-	Աշխա- տանքի թույլա- տրե- լու ամսա- թիվ	Բժշկա- կան զննու- թյուն- ների ժա- մանա- կա- ցույց*	Ծա- նոթու- թյուն**
-----------	--	-----	------------	----------------------------------	-------------	------------------------------	---	--	--	--	---	--	--	--	--	---	---	--	--	--------------------------

													հետա- զոտու- թյուն- ների արդ- յունք- ները	արդ- յունք- ները	յունք- ները	յունք- ները	յունք- ները			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21

1. «Բժշկական զննությունների ժամանակացույց» մասում լրացվում են վերջին բժշկական զննությունների ամսաթիվը և նախատեսված հաջորդ բժշկական զննության ամսաթիվը

2. «Ծանոթություն» մասում անհրաժեշտության դեպքում լրացվում են տվյալ աշխատակցին վերաբերող լրացուցիչ տվյալներ, օրինակ՝ աշխատանքից տեղափոխման կամ ազատվելու մասին:

1.	«Այո»-առկա է, համապատասխանում է նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, պահպանված են նորմատիվ իրավական ակտերի պահանջները	V	
2.	«Ոչ»-բացակայում է, չի համապատասխանում, չի բավարարում նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, առկա են խախտումներ		V
3.	«Զ/պ»-չի պահանջվում		V

4. ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

- 1) Կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում
- 2) Առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 20-ի N 34-Ն հրաման
- 3) Առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N 35-Ն հրաման
- 4) Առողջապահության նախարարի 2010 թվականի հուլիսի 16-ի N 13-Ն հրաման

Տեսչական մարմնի ծառայող _____
(ստորագրությունը)

Տնտեսավարող _____
(ստորագրությունը)

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ